

36. ԼՈՐԻԿ ПЕРЕПЕЛЮЧКА

$\text{♩} = 144$

Լո - ռիկ, լո - ռիկ, լո - ռիկ ջան, լո - ռիկ, լո - ռիկ, լո - ռիկ ջան,
 լո - ռիկ, լո - ռիկ, լո - ռիկ ջան, լո - ռիկ, լո - ռիկ, լո - ռիկ ջան:
 Վա - նա կու - կյամ, ձուկ եմ պար-ցիր, խօ - թօ - տիկ լո - ռիկ,
 կյար - նան կի - շեր տոյու չեմ պա - ցիր, խօ - թօ - տիկ լո - ռիկ,
 կար - միր խըն - ձոր տե - ղին տար-ցիր, խօ - թօ - տիկ լո - ռիկ,
 սիվ - տակ ծո - ցին կա - թոտ մնա - ցի, խօ - թօ - տիկ լո - ռիկ:

Դագմա մարդու չի ծախի,
ես մարտի եմ, դու՝ ջեյրան:

Նարոյ, նարոյ...

ԼՈՐԻԿ

Լորիկ, լորիկ, լորիկ ջան,
Լորիկ, լորիկ, լորիկ ջան:

Վանա կուկյամ, ձուկ եմ պանրցիր,
Խօրօտիկ լորիկ,
Կյանքնան կյիշեր տյուտ չեմ պանցիր,
Խօրօտիկ լորիկ,
Կարմիր խնձոր տեղին տանրցիր,
Խօրօտիկ լորիկ,
Սիվտակ ծոցին կարոտ մնացի,
Խօրօտիկ լորիկ:

Լորիկ, լորիկ...

Տնեմ էլան, կայնար տանիս,
Խօրօտիկ լորիկ,
Քյեգի տեսա, խալավ իմ միս,
Խօրօտիկ լորիկ,
Յար, շինարի բանժնիտ մեռնիմ,
Խօրօտիկ լորիկ,
Քյեգի պերօղ մօրտ մեռնիմ,
Խօրօտիկ լորիկ:

Լորիկ, լորիկ...

Ջուրն ի բնգյիր առվներուն,
Խօրօտիկ լորիկ,
Սերն ի բնգյիր պառվներուն,
Խօրօտիկ լորիկ,
Կարմիր խնձոր տամ խարսներուն,
Խօրօտիկ լորիկ,
Սև անբարոց պառվներուն,
Խօրօտիկ լորիկ:

Լորիկ, լորիկ...

Ջուխտ ըմ շամամ մեջ բյո ծոցին,
Խօրօտիկ լորիկ,
Խատ ըմ տնեմ վեր իմ խոցին,
Խօրօտիկ լորիկ,
Սրտիտ մեռնիմ, սեր կա ինի,
Խօրօտիկ լորիկ,
Աչքիտ մեռնիմ, տեղ կա ինի,
Խօրօտիկ լորիկ,

Լորիկ, լորիկ...

Լորիկ թառիր վեր թփերուն,
Խօրօտիկ լորիկ,
Պյոն ի տրիր մեջ բյարերուն,
Խօրօտիկ լորիկ,
Արի, յար ջան, սիրենբյ զիրար,
Խօրօտիկ լորիկ,
Սիրով էլնենբյ Առնուսա սար,
Խօրօտիկ լորիկ: